ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

11 / նոյեմբերի / 2019 թվական թիվ 57

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածի երկրորդ մասով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի ,, Ինքնակամ կառույցի օրիականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձանց՝ Սամվել Սահակյանի, Ոսկեծամ Սարգսյանի, Սահակ Սահակյանի, Էդուարդ Սահակյանի դիմումները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Ակնալիճ համայնքի Մաշտոցի փողոցի թիվ 52 հասցեում գտնվող՝ Սամվել Կոյրունի Սահակյանին /ծնված՝28.06.1964թ./, Ոսկեծամ Յուրիկի Սարգսյանին /ծնված՝ 01.09.1972թ./, Սահակ Սամվելի Սահակյանին /ծնված՝10.07.1990թ./, Էդուարդ Սամվելի Սահակյանին/ծնված՝23.09.1991թ./ *պատկանող* տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված՝ 164.6քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 4.8քմ մակերեսով ծածկոցը, 12.8քմ նկուղը, 3.2քմ անասնաշենքը,1.8քմ պարիսպը, ճանաչել օրինական, սահմանված վճարների գանձմամբ ՝ 912-Ն որոշմամբ հաշվարկված՝ ընդամենը արտաքին 187.2քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման համար ՝ բնակելի տների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 860դրամ, բնակելի տներին կից տնտեսական և օժանդակ կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ 6-ապատիկի չափով՝ 516դրամ, ընդամենը՝ 153230 Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:

2. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, օրինականացման համար սահմանված վճարումը Ակնալիճ համայնքի բյուջե չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ գրանցման , իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2019թվական N 58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ի N22 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

Որոշում եմ՝

1. Ակնալիճ համայնքի ղեկավարի 2019թվականի ապրիլի 1 -ի <<Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքելու մասին >>թիվ 22որոշման տեքստում և հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.
1/Որոշման 1-ին կետում և պայմանագրում ,,ութ ամիս,, բառերը փոխարինել ,,մինչև 31.12.2019 թվական, , բառերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ

2019 թվականի նոյեմբերի <<22>>

գ. Ակնալիճ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

22 նոյեմբերի 2019թվական թիվ 59

ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ հոդվածի 2-րդ կետով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, և հիմք ընդունելով Լաուրա Սահակյանի դիմումը

Որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի ղեկավար՝ Գևորգ Միսակյանի և Լաուրա Սահակյանի միջև 2001 թվականի հոկտեմբերի 4-ին կնքված 0.4հա հողամասի վարձակալության պայմանգիրը լուծել:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Միսակյան

2019թվական նոյեմբերի 22
Գ.Ակնալիճ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 նոյեմբերի 2019թվական

N 60

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածի երկրորդ մասով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի ,, Ինքնակամ կառույցի օրիականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, թիվ 912-Ն որոշման 11,14,16,18 կետերի պահանջներով և հիմք ընդունելով ,,Նորայր Դարբինյան,,ԱՁ-ի կողմից տրված հատակագիծը, ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Մովսես Միսակյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Մովսես Գևորգի Միսակյանին /ծնված 03.08.1987թ/ սեփականության իրավունքով պատկանող Ակնալիճ համայնքի Անդրանիկի փողոցի թիվ 3 հասցեում գտնվող 166-040 ծածկագրի հողամասում ինքնակամ կառուցված՝ 332.7քմ արտաքին մակերեսով N 1 առևտրի օբյեկտը, 62.4քմ արտաքին մակերեսով N2 առևտրի օբյեկտը և 34.3քմ ծածկը ճանաչել օրինական, սահմանված վճարների գանձմամբ՝ 912-Ն որոշմամբ հաշվարկված՝ ընդամենը արտաքին 429.4քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման համար ՝ հասարակական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ 1720դրամ, ընդամենը՝ 429.4քմ x 1720դր.=738568 Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:

2. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման և որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Միսակյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 նոյեմբերի 2019թվական N -61

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N19 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով.

Որոշում եմ՝

1. Ակնալիճ համայնքի ղեկավարի 2019թվականի մարտի 26-ի <<Ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր կնքելու մասին >>թիվ19 որոշման տեքստում և հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը.

1/Որոշման 1-ին կետում և պայմանագրում նշված ,,ութ ամիս,, բառերը փոխարինել ,,մինչև 31.12.2019թվական,, բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԻՍԱԿՅԱՆ

2019 թվականի նոյեմբերի <<26>>

գ. Ակնալիճ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

28 / նոյեմբերի/ 2019 թվական թիվ 62

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿ,, ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի առաջին մասի 2 կետով և շենքը չջեռուցվելու պատճառով .

Որոշում եմ՝

1.2019թվականի դեկտեմբերի 1-ից դադարեցնել Ակնալիճ համայնքի ,,Հրաշամանուկ,, մանկապարտեզ ՀՈԱԿ-ի աշխատանքները:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Գ.Միսակյան

2019թվականի Նոյեմբերի 28
Գ.Ակնալիճ